ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

«27» ---04--- 2020թ. N ----------

Ձեր ----------

<<Հետաքննող լրագրողներ>> հասարակական
կազմակերպության HETQ.am լրագրող

Տիրայր Մուրադյանին

Ք.Երևան, Բուզանդի փողոց, 1/3, 8-րդ հարկ /Էլ. Յոստ՝ tirayrmuradyan@gmail.com/

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրված Ձեր 17.04.2020թ. հարցումը ստացվել և քննարկվել է ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունում:

Հայտնում եմ, որ Արմավիրի մարզի Զարթոնք գյուղում 2019թ. ապրիլի 12-ին և 13-ին տեղի ունեցած միջադեպի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել են քրեական գործեր, նույն օրը հիշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

Նախաքննության ընթացքում երկու անձ ներգրավվել է որպես մեղադրյալ՝ համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 285-րդ հոդվածի 4-րդ մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

31.10.2019թ. որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու մասին:

2019թ. մարտի 11-ին Արմավիրի մարզի Զարթոնք գյուղի 6 բնակիչների հաղորդման հիման վրա 21.03.2019թ. ՀՀ ոստիկանության Մեծամորի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, այն ըստ ենթակայության

ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն և ընդունվել է վարույթ:

15.04.2019թ. որոշում է կայացվել Զարթոնք համայնքի նախկին ղեկավարին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Քրեական գործով իրականացվել են մեծածավալ քննչական ու դատավարական գործողություններ:

Նախաքննությունը գտնվում է ավարտական փուլում:

2020թ. հունվարի 3-ին Արմավիրի մարզի Զարթոնք գյուղում տեղի ունեցած միջադեպի առթիվ նույն օրը ՀՀ ոստիկանության Մեծամորի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է քրեական գործ, նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն և ընդունվել է վարույթ:

Նշված քրեական գործով երկու անձ 06.01.2020թ. ներգրավվել են որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և նրանց նկատմամբ նույն օրը որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Հիշյալ քրեական գործով ևս 5 անձինք ներգրավվել են որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

13.04.2020թ. և 20.04.2020թ. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավված 2 անձանց նկատմամբ որպես խափանման միջոց՝ կալանավորումը, դատարանի կողմից փոփարինվել է գրավով:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Հարգանքով՝

Պետ, արդարադատության
առաջին դասի խորհրդական **Ս.Հ.Մաթևոսյան**